Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուն լավարարում է ԲՈՀ-ի պահանջներին և ընդունելի է թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար: «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատուում» տպագրվում են 3 լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հոդվածներ:

«Լրատու» հանդեսն ունի մասնագիտական որոշակի ուղղվածություն՝ բանասիրություն, մանկավարժություն և մեթոդիկա, պատմագիտություն և իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, տնտեսագիտություն:

Մասնագիտական յուրաքանչյուր ուղղության հոդվածները տպագրության է արտոնում համապատասխան խմբագրական խորհուրդը: Գիտական հոդվածների ընդունման պահանջներն են՝

- կից ունեն համապատասխան ամբիոնի, միջամբիոնային ենթախորհուրդների երաշխավորությունը՝ ստորագրված ամբիոնի վարիչի, միջամբիոնային ենթախորհուրդների նախագահների կողմից.
- ունեն մասնագիտական գրախոսական՝ տրված գիտական խմբագրական խորհրդի կողմից.
- ունեն գիտական ղեկավարի կողմից տրված երաշխավորություն կամ գրախոսական
- ունեն հղում-ծանոթագրություններ և (կամ) օգտագործած գրականության ցանկ.
- ունեն նշված լեզուներով ամփոփումներ և բանալի բառեր.
- պարունակում են անհրաժեշտ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին.
- մեթոդական բնույթի հոդվածները պետք է ունենան նվազագույնը կես մամուլ /8 համակարգչային ստանդարտ էջ/ ծավալ:

Գիտական աշխատանքը կարող է ուղարկվել արտաքին գրախոսման: Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով (կրիչով), տառատեսակը՝ Arial Armenian (հայերեն), Times New Roman (ռուսերեն և անգլերեն լեզուներով), տառաչափը՝ 12, տողահեռավորությունը՝ 1,15